



Հայաստանի Կենսաբ. հանդես, 4(66), 2014

ԿԱՐՍԻՐ ԵՐԵՔՆՈՒԿԻ ԴԱԿԱՐԴԻՊՕԶՍԻԿ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵԴԵՎԿԻ ՈՐՈՇ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԵՅՐՈՆՍԵՐԻ ԻՄՊՈՒԼՍԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԹԹՎԱԾՆԱՔԱՂՑԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ն.Յ.ԱՂԱՄՅԱՆ, Մ.Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի պետական ազգային համալսարան, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն
nona01011966@mail.ru

Մթնոլորտային ճնշման բնականոն պայմաններում և թթվածնաբաղդի ազդեցության դի-նամիկայում ուսումնասիրվել է կարմիր երեքնուկի (*Trifolium pratense*) ազդեցությունը գլխուղեղի կեղևի որոշ գոտիների ներյոնների հմառավային ակտիվության վրա: Ժողովրդական թժկության մեջ մի շաբթ հիվանդությունների ժամանակ կարմիր երեքնուկը օգտագործվում է որպես բնական հակածագործիկ դեղաբույս: Շնուազությամբ արդյունքները վկայում են, որ ստուգիչ խմբի համեմատ կարմիր երեքնուկը ընդունած կենդանիների գլխուղեղի կեղևի ներյոնային ակտիվությունը պահպանվում է ավելի բարձր մակարդակի վրա, հատկապես թթվածնաբաղդի ծանր փուլում:

Թթվածնաբաղդ – կարմիր երեքնուկ – կեղև – ներյոնային ակտիվություն

В условиях нормального атмосферного давления и в динамике нарастающей кислородной недостаточности изучали влияние клевера лугового (*Trifolium pratense*) на импульсную активность нейронов некоторых зон коры больших полушарий. В народной медицине при ряде заболеваний красный клевер применяется как антигипоксическое средство.

Результаты эксперимента показали, что 10-дневное применение с пищей цветков этого растения облегчает состояние организма животных в условиях кислородного дефицита. На это указывает поведение корковых нейронов, которые выдерживают более тяжелые условия гипоксии.

Гипоксия – красный клевер – кора – нейронная активность

The folk medicine recommends *Trifolium pratense* as a herb with antihypoxic properties for some diseases. The experimental results suggest that after feeding the herb, the electrical activity of some cortical neurons of rats has shown high stability upon hypoxia in comparison with the screening group.

Hypoxia-Trifolium pratense-cortex-neuronal activity

Գիտատեխնիկական առաջնորդացի և Էկոլոգիական իմաստնուիրների ժամանակակից փուլում եապես ավելացել է շրջակա միջավայրի անբարենպաստ գործուների ազդեցությունը օրգանիզմի վրա, որուց թվում հասուկ տեղ է գրավում թթվածնային անբավարարությունը: Օրգանիզմի հարմարողական ռեակցիաները ոչ միշտ են կարողանում դիմակայել թթվածնաբաղդին և նպաստել օրգանիզմի բնականու կենսագործունեությանը: Թթվածնային անբավարարությունը առաջացնում է տարաբնույթ խանգարումներ կենտրոնական նյարդային համակարգի (ԿՆ) տարբեր կառուցվերում, մասնավորապես գլխուղեղի կեղևում: Կեղևը հանդիսանում է օրգանիզմի ֆիզիոլոգիական գործընթացների կարգավորման կարևոր օրականերից մեկը:

Թթվածնաբաղի պայմաններում գլխուղեղի կեղևի առանձին գոտիներում տեղի ունեցող փոփոխությունների օրինաչափությունների ուսումնահրումը հնարավորություն է տալիս բացահայտելու հարմարողական նոր միջոցներ, որոնց կիրառումը թույլ կտա պահպանելու օրգանիզմի աշխատունակությունը շրջակա միջավայրի նովիսիսկ անբարենպաստ պայմաններում [2,5]:

Աշխատանքի նպատակն էր ուսումնասիրել կարմիր երեխնուկի հակաօքսիդի ազդեցությունը գլխուղեղի կեղևի վրա թթվածնաբաղի պայմաններում:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրությունները կատարվել են սուր փորձերի պայմաններում 180-230 գ սպիտակ առնետների վրա, որոնք թմբեցվել են բլորալողի և նեմբրովայի խառնուրդով (10 մգ/կ և 30 մգ/կ համապատասխանաբար): Փորձերը կատարվել են երկու խումբ կեղևանիների վրա: Առաջին խմբի կեղևանիների մոտ ուսումնասիրվել է կեղևային նեյրոնների ակտիվությունը թթվածնաբաղի դիևամիկյանում, իսկ երկրորդի խմբի կեղևանիներու նախբան ուսումնասիրությունը 10 օր կերակրվել է սմնիքի հետ խառնված երեխնուկի ջրացած ծաղկվերով:

Կենդանու գույնը ամրացվել է ստերոտաբսիկ սարքի վրա և ենթարկվել համապատասխան վիրահատության: Կեղևի նեյրոնների ակտիվության արտածումը կատարվել է 2M NaCl-ի լուծույթով լցված ապակյա միկրոէլեկտրոդներով (ծայրի տրամագիծը՝ 1.5-2 մկմ, դիմարդությունը՝ 3-5 Ohm): Հետազոտությունները կատարվել են մթնոլորտային ճշշման բնականոն պայմաններում և թթվածնաբաղի ազդեցության դիևամիկյանում: Այդ նպատակով ստերոտաբսիկ սարքավորմանը ֆիբրոված կեղևանին տեղադրվել է ճնշահցիկլու: Նեյրոնների ուսումնասիրվող ցուցակիների գուածումը կատարվել է մթնոլորտային ճշշման բնականոն պայմաններում ($PO_2=142$ մմ սս.), այսուհետև շարունակվել է միևնույն նեյրոնների ուսումնասիրությունը թթվածնաբաղի ազդեցության դիևամիկյանը 4,5-5 հագ.մ ($PO_2=95-85$ մմ սս.), 7,5-8 հագ.մ ($PO_2=64-53$ մմ սս.) բարձրության վրա: Նոյն հետազոտությունը կատարվել է նաև կեղևանիների երկրորդ խմբում:

Համապատասխան «բարձրություն» ստերնձեր է օնամիջ պոմայի օգնությամբ ճնշանցիկց ողի դուրս մղման ճանապարհով: Ստացված թվային տվյալները վերլուծության են ենթարկվել համապատասխան համակարգչային on-line ծրագրով:

Արդյունքներ և քննարկում: Գրականության մեջ բի են տվյալները, որոնք կարող են բացահայտել ժողովրդական բժշկությունում որպես հակաօքսիդի միջոց կիրառվող բրյուսերի ազդեցության մեխանիզմները: Այդ նպատակով մեր փորձերում ուսումնասիրվել է ավանդական բժշկությունում տարբեր հիվանդությունների (բրոնխիտ, ասթմա, ինչպես նաև սակավարյունություն, սիրտանորման համակարգի տարբեր հիվանդություններ) ժամանակ օգտագործվող մարզագետնային կարմիր երեխնուկի (*Trifolium pratense* L.) ազդեցությունը գլխուղեղի կեղևի վրա թթվածնային անբարարության պայմաններում:

Նորմօքսիայի պայմաններում առաջին խմբի կեղևանիների կեղևի տեսողական գոտուց գրանցվել է 43 (100%) նեյրոնի, իսկ շարժողական գոտուց 36 (100%) նեյրոնի ելեկտրական ակտիվությունը: Թթվածնաբաղի առաջին փուլում նշված նեյրոններից ակտիվությունը պահպանել են համապատասխանաբար 33 (76,7%)-ը և 28 (77,8%)-ը: Թթվածնաբաղի ծանր փուլում PO_2 -ի իսխստ անկումը հանգեցրել է կեղևի նշված գոտիներից գրանցված նեյրոնների քանակի իսխստ նվազման (համապատասխանաբար 51,1% և 52,8%): Կեղևանիներին «հջեցնելուց» հետո տեղի է ունեցել ելակետային տվյալների մասնակի վերականգնում: Երկրորդ խմբում նույնպես գրանցվել են կեղևի համապատասխան գոտիների նեյրոնների հմարտային ակտիվությունը ինչպես նորմօքսիայում, այնպես էլ հիպօքսիայի ազդեցության դիևամիկյանում: Փորձերը ցույց տվեցին, որ երեխնուկի ազդեցությամբ թթվածնաբաղի և առաջին (4,5-5 հագ.մ), և երկրորդ (7,5-8 հագ.մ) փուլում ավելի մեծ քանակով նեյրոններ են պահպանում իրենց ակտիվությունը: Այսպես թթվածնաբաղի առաջին փուլում ակտիվությունը պահպանել են կեղևի շարժողական գոտու նեյրոնների 92,3 %-ը, իսկ տեսողական գոտու 92,6 %-ը: Թթվածնաբաղի ծանր փուլում այդ ցուցակիները կազմել են համապատասխանաբար 69,2% և 73,1%: «հջեցնելուց» հետո իրենց ելակետային ակտիվությունը ստուգիչ տվյալների համեմատ ավելի մեծ քանակով նեյրոններ են վերականգնել կեղևանիների երկրորդ խմբում: Փոկիուղությունների ողջ դիևամիկյան ներկայացված է աղ. 1 -ում:

Բացի քանակական փոփոխություններից գրանցվել և վերլուծվել են նեյրոնների այլ ցուցակիներ ևս՝ հմարտային համագարկի տևողությունը, համագարկում իմպուների քանակը և հմարտային ակտիվության միջին հաճախությունը:

Աղյուսակ 1. Երեքնուկի ազդեցությունը թթվածնաբաղի պայմաններում գլխուղեղի կեղևի նեյրոնների վրա

| Բարձրություն | Ստուգիչ տվյալներ | | Նեյրոնների փոփոխությունը երեքնուկի օգտագործումից հետո | |
|------------------------|------------------|------|---|------|
| | Բացարձակ քանակը | % | Բացարձակ քանակը | % |
| Տեսողական գոտի | | | | |
| Նորմա | 43 | 100 | 52 | 100 |
| 4,5-5հազ.մ | 33 | 76,7 | 48 | 92,3 |
| 7,5-8հազ.մ | 22 | 51,1 | 36 | 69,2 |
| Իջեցում | 34 | 79,1 | 49 | 94,2 |
| Հարժողական գոտի | | | | |
| Նորմա | 36 | 100 | 41 | 100 |
| 4,5-5հազ.մ | 28 | 77,8 | 38 | 92,6 |
| 7,5-8հազ.մ | 19 | 52,8 | 30 | 73,1 |
| Իջեցում | 29 | 80,6 | 39 | 95,1 |

Աղյուսակ 2. Թթվածնաբաղի պայմաններում գլխուղեղի կեղևի նեյրոնների իմպուլսային ակտիվության փոփոխությունը երեքնուկի ազդեցությամբ

| Ցուցանիշներ | Ստուգիչ | | | | Ցուցանիշների փոփոխությունը երեքնուկի օգտագործումից հետո | | | |
|--|---------|-------------|-------------|---------|---|-------------|-------------|---------|
| | Նորմա | 4,5-5 հազ.մ | 7,5-8 հազ.մ | Իջեցում | Նորմա | 4,5-5 հազ.մ | 7,5-8 հազ.մ | Իջեցում |
| Տեսողական գոտի | | | | | | | | |
| Համազարկի տևականությունը, վ | 0,86 | 0,84 | 0,87 | 0,85 | 0,68 | 0,69 | 0,71 | 0,69 |
| Իմպուլսների թիվը համազարկում | 16 | 20 | 11 | 18 | 27 | 33 | 23 | 26 |
| Իմպուլսների միջին հաճախականությունը, իմպ/վ | 18,6 | 23,8 | 12,6 | 21,1 | 39,7 | 47,8 | 32,4 | 37,6 |
| Հարժողական գոտի | | | | | | | | |
| Համազարկի տևականությունը, վ | 0,72 | 0,71 | 0,85 | 0,85 | 0,47 | 0,44 | 0,47 | 0,5 |
| Իմպուլսների թիվը համազարկում | 15 | 17 | 16 | 19 | 19 | 22 | 18 | 19 |
| Իմպուլսների միջին հաճախականությունը, իմպ/վ | 20,8 | 23,9 | 18,8 | 22,3 | 40,4 | 50 | 38,2 | 38 |

Ըստ ստուգիչ տվյալների՝ տեսողական գոտուց գրանցված նեյրոնների համազարկի տևականությունը եղել է 0,86 վ, իմպուլսների քանակը՝ 16, միջին հաճախությունը՝ 18,6 իմպ/վ:

Երեքնուկի 10-օրյա օգտագործումից հետո այդ ցուցանիշները համապատասխանաբար եղել են 0,68 վ, 27, և 39,7 իմպ/վ: Ստուգիչ խմբի կենդանիների շարժողական գոտուց գրանցված նեյրոնների իմպուլսային ակտիվությունը կազմել է՝ 20,8 իմպ/վ, իսկ երեքնուկի օգտագործումից հետո՝ 40,4 իմպ/վ:

Երկրորդ խմբի կենդանիների մոտ թթվածնաբաղի ազդեցության դինամիկայում նեյրոնների իմպուլսային բարձր ակտիվությունը պահպանվել է: Վերոհիշյալ ցուցանիշների փոփոխության դինամիկան բերված է աղ. 2-ում:

Թթվածնաբաղի առաջին փուլում, երբ ներշնչվող օդում PO_2 -ը կազմում է 95-85 մմ սս., իսկ արյան թթվածնային հագեցումը՝ 80-85 %, տեղի է ունենում կեղևի նեյրոնների իմպուլսային ակտիվության մեծացում, որը հիմնականում պայմանավորված է օրգանիզմի տարրեր ռեֆլեքսածին գոտիների բեմուրնեկալիշներից դեպի կեղև գնացող ազդակների դրդող ազդեցությամբ: Թթվածնաբաղի առաջին փուլում տեղի է ունենում Na^+ -ի հոսքի ուժեղացում դեպի նեյրոն, որն էլ, հավանաբար, նեյրոնի էլեկտրա-

գենեզի խանգարման մեխանիզմներից մեկն է [6, 10, 11]: Կեղևի սերունդների հմապուսային ակտիվության մեծացումը կարող է լինել նաև այդ գործոնի ազդեցությամբ պայմանավորված քջի թաղանթի ապարատներացման արդյունք:

Այսպիսով, հիպօրօփայի առաջին փուլում Նեյրոնների էլեկտրական ակտիվությունը, որն արտահայտվում է միջիմայլսային տարածության փոքրացմամբ, այսինքն հմապուլսների հաճախության մեծացմամբ, բջջաթաղանթի ապարակեացման արդյունք է: Գրական տվյալների համաձայն գոյություն ունի որդշակի կապ օրգանիզմի միջավայրում PO_2 -ի փոքրացման, և այդպահին բջջներում H^+ իոնների կուտակման, K^+ արտահոսքի ուժեղացման և բջջաթաղանթի ապարակեացման միջև [5]:

Հիպօքսիայի երկրորդ կամ ծակը փուլում PO_2 -ը կազմում է 64-56 մմ ս., իսկ առյան թթվածնային հագեցումը՝ 65-60%: Այս փուլում դիտվել է ուսումնասիրվող նեյռոնների հմապուլսային ակտիվության խիստ նվազում, որը բացատրվում է բջջաթաղանքի ապարենացման հետագա խորացմամբ: Ապարենացման ուժեղացումը հանգեցնում է թաղանթային պոտենցիալի արտահայտված նվազման, որի արդյունքում կարող է տեղի ունենալ նույնիսկ բջջային ակտիվության լիրկ ճնշում [1]: Ըստ երևոյթին, այդ փոփոխությունները պայմանավորված են թաղանքի թափանցելիության և բջջային մետաբոլիզմի մեխանիզմների խանգարմամբ: Հիպօքսիայի խորացմամբ մեծանում է իոնային տեղաշարժը՝ Na^+ -ի անցումը բջջից ներս և K^+ -ի դուրս գալը բջջից դեպի արտաթաջային տարածությունը:

Հիպօքսիայի երկրորդ փուլում Նեյրոնների ակտիվության և վագուլսն ըստ որոշ հեղինակների կապված է ուղեղում ԳՎԿԹ-ի քանակի ավելացան հետ, որն ընտրողաբար ուժեղացնում է արգելակվող հետսխապասային պոտենցիալ՝ սահմանափակելով թթվածին ծախսը [6, 7]: Հիպօքսիայի ազդեցությամբ տեղի է ունենում նաև բջջային ացիդոզի զարգացում, որն էլ կարողային բջջում ախտաբանական գործընթացների զարգացման պատճառներից մեկն է [5, 11]:

Орфавակամում վերիիշյալ զարգացնելու համար բժշկության մեջ կիրառվում են բնական և արհետական հակահիպօքսիկ բուժամիջոցներ, այդ թվում նաև հակաօքսիդի ազդեցությամբ օժոված շատ բույսեր, մասնավորապես կարմիր երեխուկը: Ժողովրդական բժշկության մեջ կարմիր երեխուկը օգտագործվում է ջրային և սպիրտային թուրմերի ձևով [1]: Հայտնի է, որ երեխուկի ծաղիկները պարունակում են ֆլավոնիդներ, եթերայուղեր, Բ-խմբի, ինչպես նաև A,C,E վիտամիններ, կումարին, ալկալինիներ, գլիկոզիդներ, ճարպային յուղեր, խեժ, սպիտակուցներ, ածխացրեր, թիրոզին ամինաթթու, որով է պայմանավորված են նրա բուժական ազդեցությունը միարժության և մի շաբաթ այլ իրվանդությունների ժամանակ [3, 8, 9]:

Παραρρεύει Ε, η ψηφιακή Ε-Ιδιοτυπία που αποτελείται από την ενσωμάτωση της συστατικής [3, 5, 9]. Το παραρρεύει Ε, η ψηφιακή Ε-Ιδιοτυπία δεν είναι μηχανική ή καρπαθητή, αλλά έχει σχέση με την ανθρώπινη γνώση και την ανθρώπινη συνείδηση. Η ιδιοτυπία Ε προσέβαλλε στην ανθρώπινη γνώση και την ανθρώπινη συνείδηση, αλλά δεν ήταν μηχανική ή καρπαθητή. Η ιδιοτυπία Ε προσέβαλλε στην ανθρώπινη γνώση και την ανθρώπινη συνείδηση, αλλά δεν ήταν μηχανική ή καρπαθητή.

Վիտամին C-Ն (ասկորբինաթթու) ունի մազանոթերը ամրացնող, արյունաստեղծումը խթանող, ինչպես նաև իրուացնող ճարագայթահարումից պաշտպանող հատկություն: Այն դրական դեր է կատարում օրգանիզմի հմունյային ռեակցիաների ձևավորման ժամանակ, նպաստում է հակամարմինների առաջացմանը, բարձրացնում է արյան լեկոցիտների քանակության ակտիվությունը: Վիտամին C-Ն ապահովում է նաև օրգանիզմի առավել բարձր կայունությունը թթվածնային անբավարության վկանմամբ, որը պայմանավորված է օրգանիզմի օքսիդավերականգման ռեակցիաներում և սա մասնակցությամբ [9]:

Հետազոտությունը արդյունքները թույլ են տալիս Ենթադրելու, որ Նշված դեղաբայուսի օգուագործման ժամանակ բարձրանում է կեղևային քջիջների դիմադրողականությունը՝ թթվածնային անբավարարության նկատմամբ. Եթե ստուգիչ խմբի կենտրակեների մոտ նեյրոնների ակտիվությունը արգելակվում էր 6-6,5 հազ. մ «բարձրության» վրա, ապա փորձնական խմբի մոտ նրանք շարունակում եին ակտիվ մուսայ նոլինիսկ 7-8 հազ. մ «բարձրության» վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բայլուրյան Թ.Գ., Գևորգյան Մ.Լ.* «Հայաստանի ուսերի բուսերը», Երևան, «Լուսական», Եջ 128, 2007:
2. *Աղաջանյան Հ.Ա. և օր.* Проблемы адаптации и учение о здоровье. М., изд-во Росс. Унив. дружбы народов, ст. 283, 2006.
3. *Վալյուման Ա.Բ.* Витамин Е в питании сельскохозяйственных животных. Витамины. Киев, "Наука-Думка" вып. 8, 1975.
4. *Վլադիմիրով Յ.Ա., Արշակով Ա.Ի.* Перекисное окисление липидов в биологических мембранах. М., Наука, с.15, 1972.
5. *Վլասովա Ի. Գ. , Աղաջանյան Ի.Ա.* Индивидуальная устойчивость к гипоксии организма и нервной клетки. Бюлл. эксп. биол. и мед., 118, 11, с. 454-457, 1994
6. *Լուկյանովա Լ.Դ.* Митохондриальная дисфункция, типовой патологический процесс, молекулярный механизм гипоксии, Проблемы гипоксии: молекулярные, физиологические и медицинские объекты под. ред. Л. Д. Лукъяновой и И. Б. Ушакова: М. Истоки, с. 8, 2004.
7. *Մալիշև Ա.Դ., Լուկյանովա Լ.Դ., Կրպիսին Ս.Վ.* Действие гипоксии нарастающей тяжести на динамику ЭЭГ коры головного мозга крыс с различной резистентностью к острому дефициту кислорода. Бюлл. эксп. биол. и мед., 122, 9, с.244, 1996.
8. *Пишкова О.В.* Действие β-каротина и витамина Е на оксигенотопографию и биоэлектрическую активность нервных клеток. Мат.-лы 209 конф., посвящ. 80-летию со дня рождения проф. Држевецкой И.А. "Физиологические проблемы адаптации", Ставрополь, 2003
9. *Շաօյէ Մ.Շ., Պիշկովա Օ.Վ.* Адаптационные изменения сердечно-сосудистой системы человека под влиянием природных антиоксидантов. Росс. физiol. журн. Им. Сеченова, 90, 8, с. 14-18, 2004.
10. *Martin B., Otmar P., Idor E. et. all.* Intermittent hypoxia increases exercise tolerance in elderly men with and without coronary artery disease. International J. of Cardiology, 96, p. 247-254, 2004.
11. *Pizani A., Galabresi P., Bernardi G.* Hypoxia in strial and cortical neurons: membrane potential and Ca^{+2} measurements. Neuroreport, 8, 5 p. 1143-1147, 1997.

Ստացվել է 25.07.2014